



ԱՄՆ առևտրի պալատ Հայաստանում (կարծիք)

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնը հրատարակել է Կորպորատիվ Սոցիալական Պատասխանատվության (ԿՍՊ) Ուղեցույց

Իսկ գիտե՞նք արդյոք ինչ է իրենից ներկայացնում ԿՍՊ-ն, որն է իր գաղափարը, սկզբունքները, կիրառությունը, առավելությունները և, վերջապես, նրա օգտակարությունը Հայաստանի մասնավոր հատվածի ընկերությունների համար:

Այս հարցերի պատասխանը տեղ են գտել ԿՍՊ Ուղեցույցում, որը մշակվել է «Բի Էս Սի» ընկերության կողմից (հայերեն լեզվով): Ուղեցույցը մշակվել է հայկական կազմակերպությունների սեփականատերերի, տնօրենների, բաժնետերերի, աշխատողների, ինչպես նաև նրանց համար, ովքեր հետաքրքրված են այս գաղափարով: Այն իրենից ներկայացնում է օգտակար գործիք հայկական կազմակերպությունների համար ԿՍՊ ծրագրերի մշակման, իրականացման և հաղորդակցման գործում, բացի այդ նպատակ ունի ծառայելու որպես հիմք և սկզբնակետ ԿՍՊ գաղափարի ճիշտ ըմբռնման և սկզբունքների ներդրման գործում:

«Բի Էս Սի»-ին ներկայացրել է կարևորագույն, օգտակար և անհրաժեշտ տեղեկատվություն ԿՍՊ-ի վերաբերյալ և մանրամասնորեն ներառել հետևյալ կետերը.

- ✓ ԿՍՊ հասկացության սահմանումը և կիրառման ոլորտները,
- ✓ ԿՍՊ-ի հիմնական դերը գործառնական և ռազմավարական մակարդակներում,
- ✓ ԿՍՊ ռազմավարության և քաղաքականության մշակման քայլերի հաջորդականությունը Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների համար:

Այս ամենը ավելի տպավորիչ դարձնելու և Հայաստանում ԿՍՊ սկզբունքների կիրառման հնարավորությունները հիմնավորելու համար «Բի Էս Սի» ընկերությունը ներկայացրել է ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայկական մի շարք ընկերությունների ԿՍՊ-ի և արժեքների շղթայի կառուցման բնագավառում հաջողված փորձերի լավագույն օրինակներ: Բացի այդ ուղեցույցը ունի բացատրական բաժին՝ ԿՍՊ տերմինների բառարան, որտեղ մանրամասնորեն սահմանված են ԿՍՊ-ին

առնչվող տնտեսագիտական տերմիններ, ինչն էլ հնարավորություն է տալիս ընթերցողին ավելի պարզ և հասկանալի ընթերցել սույն ուղեցույցը:

Ուղեցույցը մշակվել է «ԲԻ Էս ՍԻ»-ի 16 տարվա փորձի հիման վրա՝ ICCO en Kerkin Actie նիդերլանդական կազմակերպության ֆինանսական աջակցությամբ վերջին 5 տարիների ընթացքում իրականացրած ԿՍՊ ծրագրերի արդյունքում: Այդ փորձը «ԲԻ Էս ՍԻ»-ին ձեռք է բերել աստիճանաբար՝ անցնելով հետևյալ փուլերը.

1. 2004թ - Triodos FACET/Adapppt նիդերլանդական կազմակերպության հետ ԿՍՊ գաղափարի ներմուծումը Հայաստան:
2. 2004թ - ԿՍՊ-ի հետազոտություն Հայաստանի 60 ընկերությունների սեփականատերերի, գործադիրների, ինպես նաև ղեկավար պաշտոնյաների հետ:
3. 2005-2008թթ-ին - Triodos FACET-ի հետ (ICCO-ի ֆինանսական աջակցության ներքո) ԿՍՊ-ի «Ուժեղացնել մատակարարման շղթայի առևտրային, միջավայրային և սոցիալական կայունությունը» երկու փուլերից բաղկացած փորձնական ծրագրի իրականացում:
4. 2008-2009թթ-ին և ընթացիկ - "VALUES" ծրագրի իրականացում, այսինքն՝ ԿՍՊ քաղաքականության ստեղծում և իրականացում արժեքների շղթայում, ինչպես նաև ԿՍՊ գաղափարի իրազեկումը հանրությանը:

Իր հետագա գործունեությունում «ԲԻ Էս ՍԻ»-ին նախատեսում է հայկական շուկային ներկայանալ ոչ միայն 1994թ-ից գործող խորհրդատվական, ուսուցման, հետազոտական և գնահատման կազմակերպություն, այլ նաև համալրել իր ցանկը որպես ԿՍՊ ծառայություն մատուցող: Այդ նպատակով ստեղծվելու է ԿՍՊ-ի խնդիրներին արդրադարձող կայք, որի շնորհիվ հայկական ընկերությունները և այլ հետաքրքրված անձինք կկարողանան գտնել իրենց հետաքրքրող տեղեկատվությունը, լավագույն փորձերը, ստանալ ԿՍՊ-ին վերաբերվող իրենց հարցերի պատասխանները և անհրաժեշտ խորհրդատվությունը: